378/47.925
Ŋ-48

378(47.925)
Պ-48
06 APR 2010

# Հ. Ս. Խ. Հ.
# ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

***1929/30 թ. ուս. տարում***

*(Արտատպված է «Խորհրդային Հայաստան»-ի № 125 (2388)-ից, 1929 թ. հունիսի 2)*

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1929 թ.

17 JUL 2013

54128

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ՏՊԱՐԱՆ

Գրառեպգլխվար 2175 բ. Պատվեր 3693
Տիրաժ 600.

# ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 1929|30 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ

1. ՀՍԽՀ Պետական Համալսարանը կարող են ընդունվել 17 տարեկանից վեր բոլոր այն քաղաքացիները, վորոնք իրենց պատրաստությամբ բավարարում են սույն ընդունելության պայմաններով նախատեսված բոլոր պահանջները։

ԾԱՆՈԹ.— Անաշխատ յեկամտով ապրող քաղաքացիները, ինչպես նաև ընտրական ձայնի իրավունքից զրկվածները Պետհամալսարան չեն ընդունվում։

2. Պետ. Համալսարանում 1929 | 30 ուս. տարվա համար նորեկ ուսանողների ընդունելությունները կատարելու նպատակով՝ Պետհամալսարանին առընթեր կազմակերպվում ե Ընդունելության Հանձնաժողով։

3. Պետհամալսարանը 1929 | 30 ուս. տարում ընդունելու յե իր առաջին կուրսերը 330 ուսանող-ուհի, վորոնք բաշխվելու յեն ըստ ֆակուլտետների և բաժինների՝ համաձայն հետևյալ նորմայի.— բժշկական ֆակուլտետ—50 հոգի, գյուղատնտեսական ֆակուլտետ—65 հոգի, տեխնիկական ֆակուլտետ—65 հոգի և մանկավարժական ֆակուլտետ—150 հոգի (ֆիզիկո մաթեմատիկական բաժին—40 հոգի., բնագիտական բաժին—50 հոգի և պատմագրական բաժին—60 հոգի)։

4. Պետհամալսարանի Ընդունելության Հանձնաժողովն ուսանող-ուսանողուհիների ընդունելությունները կատարելիս՝ ղեկավարվելու յե բաշխման հետևյալ տոկոսակով.—

1). Ադրբեջանին (ներառած ավտոնոմ հանրապետությունները)—25 տեղ.

2) Վրաստանին (ներառած ավտոնոմ հանրապետությունները)—25 տեղ.

3). ԽՍՀՄ-ի այլ հանրապետություններին—15 տեղ.

4). ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս գտնվող պետությունների քաղաքաց.—10 տեղ.

5). Մնացած բոլոր տեղերը հատկացվում են ՀՍԽ Հանրապետության քաղաքացիներին։

5. Դաշնակից հանրապետությունների լուսժողկոմատները բաշխում են ստացած տեղերն իրենց հանրապետության համապատասխան հիմնարկություններին և տեղական օրգաններին, վորոնք՝ համաձայն ստացած տեղերի թվի՝ գործուղում են տվյալ դաշնակից հանրապետության լուսժողկոմատի միջոցով ՀՍԽՀ Պետհամալսարան մտնել ցանկացողներին, նկատի ունենալով խնդրատուների այս կամ այն ֆակուլտետում սովորելու ցանկությունը։

ԾԱՆՈԹ.—Հանրապետական լուսժողկոմատներին իրավունք ե վերապահվում գործուղելու բաշխման նորմայից դուրս հիմնականների 50 տոկոսի չափով թեկնածուներ։ Ստուգումներին բավարար արդյունք հայտաբերած թեկնածուները կարող են գրավել նորմայով գործուղված թույլ և համալսարանական պարապմունքների համար անպատրաստ հիմնականների տեղերը։

ԾԱՆՈԹ. 2.— Թեկնածուները գործուղվում են հիմնականների հետ միաժամանակ և միևնույն ընդհանուր հիմունքներով։

6. Դաշնակից հանրապետություններից գործուղված ուսանողները պատրաստվում են ՌՍՖԽ Հանրապետության բարձրագույն դպրոցների ընդունելության ստուգումների համար հրապարակած ծրագրերով (տես՝ «Программа испытаний для поступающих в ВУЗ-ы РСФСР в 1929 г. Гиз, 1929 г.) և ստուգվելու յեն ՀՍԽՀ Պետհամալսարանում այդ ծրագրերի սահմաններում։

7. Դաշնակից հանրապետություններից ՀՍԽՀ Պետհամալսարան գործուղվողները պետք ե անպայման իմանան հայերեն լեզուն։

8. Դաշնակից հանրապետությունների քաղաքացիներից անհատական դիմումներ ՀՍԽՀ համալսարան մտնելու մասին չեն ընդունվում։

9. Հոդված 4 ում հիշված կազմակերպությունների գծով գործուղվածների կամ հանձնարարածների սոցիալական ընտրությունը կատարում են գործուղող հիմնարկություններն ու կազմակերպությունները, սակայն Պետհամալսարանի Ընդունելության Հանձնաժողովին իրավունք ե վերապահվում գործուղվածների կամ հանձնարարածների վերաբերմամբ պատճառաբանված բացարկ անել։

10. ՀՍԽՀ Պետհամալսարան ընդունվել ցանկացողներն ուսանող կհամարվեն Ընդունելության Հանձնաժողովի զտումն անցնելուց, ապա համապատասխան ստուգումների յենթարկվելուց հե-

21. Պետհամալսարան ընդունված նորեկ ուսանողները մեքենայաբար Պետհամալսարանից հեռացված կհամարվեն, յեթե մինչև նոյեմբերի 10-ը վոչ հարգելի պատճառներով չսկսեն համալսարանական պարապմունքները: Հարգելի պատճառով բացակայող ուսանողների իրավունքները հնարավոր է վերականգնել միմիայն մինչև 1929 թ. նոյեմբերի 15-ը:

22. Պետհամալսարանի Ընդունելության և Արհլուսգլխվարչության առընթեր գործող ընդունելության կենտրոնական հանձնաժողովներից անկախ, ինչպես և ընդունելությունների համար սահմանված ժամանակամիջոցից դուրս վոչ վոք չի կարող ընդունվել Պետհամալսարան: Նմանապես չի թույլատրվում Պետհամալսարանում ունենալ ազատ ունկնդիրներ և ընդունելությունների ժամանակամիջոցն անցնելուց հետո այսպես կոչված «թեկնածուների» ցուցակներ:

Նույն կարգը խանգարող պաշտոնատար անձինք կենթարկվեն պատասխանատվության, իսկ սահմանված կարգից դուրս ընդունված նորեկները կհեռացվեն Պետհամալսարանից:

23. Պետհամալսարանի Ընդունելության Հանձնաժողովի վորոշումները կարելի յե գանգատարկել Արհլուսգլխվարչության առընթեր գործող Ընդունելության կենտրոնական Հանձնաժողովին, վորի վորոշումները վերջնական են և գանգատարկման վոչ յենթակա:

24. Պետական Համալսարանի ընդունելության աշխատանքները վերջացնելուց անմիջապես հետո մինչև նոյեմբերի 10 ը Պետհամալսարանի ուսման վճար սահմանող հանձնաժողովը կազմում է ինչպես նոր ընդունված վճարունակ ուսանողների ցուցակը, այնպես էլ վորոշում է յուրաքանչյուրի ուսման վճարի չափը:

Ուսանողները պարտավոր են առաջին կիսամյակի ուսման վճարը մացնել Պետհամալսարանի դրամարկղը մինչև նոյեմբերի 20-ը: Մինչև ուսման վճար մուծելը նոր ընդունված վճարունակ ուսանողներին ուսանողական տոմս չի տըրվում. Այդ ժամանակամիջոցում ուսման վճար չմացնող նորեկ ուսանողները համարվում են Պետհամալսարանից հեռացված:

25. Սույն պայմանները խախտող խնդրատուների դիմումները թողնվում են անհետեվանք:

Լուսժողկոմի տեղակալ՝
Ա. ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Արհլուսգլխվարչության պետ՝
Կ. ՄԵԼԻՔ-ՈՀԱՆՋԱՆՅԱՆ

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
## ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԸՆԴՈՒՆՎՈՂՆԵՐԻ
(1929 | 30 ուս. տարի)

1. Ազգանուն
2. Անուն, հայրանուն.
3. Սեռ.
4. Ծննդյան թիվն ու վայրը.
5 Ազգություն և հպատակություն.
6. Սոցիալական ծագում (ծնողների սոցիալական դրությունը)՝ ա. բանվոր, բ. գյուղացի, բատրակ, չքավոր-գյուղացի, միջակ գյուղացի, ունևոր գյուղացի, գ. ծառայող, դ. մասնագետ (գիտ. աշխատավոր, ինժեներ, ագրոնոմ, բժիշկ, դպր. աշխատավոր և այլն), ե. արհեստավոր, առևտրական, հոգևորական, ազատ պրոֆեսիա ունեցող, այլք:
7. Ծնողների տնտեսական ապահովության աստիճանը (գույքը, տարեկան միջին աշխատավարձը կամ յեկամուտը).
8. Ընդունվողի սոցիալական ներկա դրությունը՝ բանվոր, բանվորի զավակ, չքավոր գյուղացի, չքավոր գյուղացու զավակ կամ չքավոր գյուղացու խնամքի տակ ապրող, միջակ գյուղացի, միջակ գյուղացու զավակ կամ միջակ գյուղացու խնամքի տակ ապրող, ունևոր գյուղացի, ունևոր գյուղացու զավակ կամ ունևոր գյուղացու խնամքի տակ ապրող, ծառայող, նրա զավակը կամ նրա խնամքի տակ ապրող, արհեստավոր, նրա զավակը կամ խնամքի տակ ապրող, հոգևորականի զավակ կամ նրա խնամքի տակ ապրող, առևտրականի զավակ կամ նրա խնամքի տակ ապրող, կարմիր բանակային, նրա զավակը կամ խնամքի տակ ապրող, վորբ, այլք (ընդգծել).

ԾԱՆՈԹ. — Սոցդրության և սոց. ծագման մասին տրված հարցերին պատասխանել լրիվ և ուր հարկն է անպայման ընդգծել, որինակ՝ չընդգծել մենակ գյուղացի, առանց ընդգծելու, թե ինչպիսի.

9. Ի՞նչ քաղաքական կուսակցությունների յեք պատկանել.
10. Կոմկուսի անդամ կամ թեկնածու յեք (ընդգծել), յերբվանի՞ց, տոմսի №-ը.
11. ԼԿՅԵՄ-ի անդամ կամ թեկնածու յեք (ընդգծել), յերբվանի՞ց, տոմսի №-ը.



12. Վո՞ր արհմիության անդամ եք, վո՞ր թվից, տոմսի №-ը.
13. Ձեր ծնողները վո՞ր արհմիության անդամ են.
14. Ձեր ընտանեկան դրությունը (ամուրի, ամուսնացած, այրի, ամուսնալույծ (ընդգծել),
15. Ձեր պրոֆեսիան.
16. Ձեր մասնագիտությունը.
17. Զին դրությունը (կանչված եք, ազատված եք, յեթե այո, ի՞նչ պատճառով).
18. Ծառայո՞ւմ եք այժմ ա) վորտե՞ղ, բ) վո՞ր թվից, գ) ի՞նչ ռոճիկով.
19. Յեթե չեք ծառայում, ի՞նչ յեկամտով եք ապրում.
20. Ծառայե՞լ եք անցյալում՝ ա) վո՞ր թվից, բ) վորտե՞ղ, գ) ի՞նչ պաշտոնով.
21. Ի՞նչ տիպի դպրոց եք ավարտել և վորտե՞ղ.
22. Քանի՞ անգամ եք դիմել բարձրագույն դպրոցների, յեթե մերժում եք ստացել՝ ի՞նչ պատճառով.
23. Ձեր մշտական բնակավայրը.
24. Վո՞րտեղից եք յեկել սովորելու (հանրապետություն, պետություն, նահանգ, գավառ, քաղաք, գյուղ) (մանրամասն հասցեն).
25. Ո՞ւմ կողմից եք գործուղված.
26. Արտադրական հիմնարկության կամ ձեռնարկության աշխատանքներից ազատվա՞ծ եք ուսումը շարունակելու համար, ի՞նչ պայմանով՝ ամբողջովի՞ն, թե՞ մասամբ.
27. Մասնակցե՞լ եք քաղաքացիական կռիվներին, վո՞րտեղ և ինչքա՞ն ժամանակ.
28. Ի՞նչ հասարակական աշխատանք եք կատարել, վո՞ր թվին, վո՞րտեղ, վորպես ի՞նչ.
29. Ի՞նչ սեփականություն ունեք դուք, կամ ձեր ծնողները (վորտե՞ղ և ի՞նչ).
30. Ձեր ընտանիքի անդամների թիվը, վորոնցից աշխատունակ . . .] հոգի, անաշխատունակ . . . հոգի: Աշխատողների ստացած ռոճիկի կամ յեկամտի չափը.
31. Ներկայիս ձեր ճիշտ և մանրամասն հասցեն:

Հարցաթերթը լրացնողի ստորագրությունը.

Վերը բերված տվյալները հաստատում ենք (Կուսկոմ, ԼԿՅԵՄ, արհմիություն, Քաղխորհուրդ, գործուղող հիմնարկ-ձեռնարկություն և այլն):

Յեթե անհնարին է հաստատել հարցաթերթերի բոլոր կետերի պատասխանների ճշտությունը, գործուղող հիմնարկությունը կամ կազմակերպությունը մակագրում է՝ «Հարցաթերթիկի կետ № № — (նշանակել թվանշաններով ըստ կարգի) վավերացնում ենք»:

Գործուղող կամ տվյալները վավերացնող հիմնարկության և կազմակերպության պատասխանատու աշխատակցի ստորագրությունը (պարզ).

Կնիք.

### ՊԵՏՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Թույլատրված է ստուգման.

բ) Ընդունված է.

գ) Մերժված է—(պատճառները).

Ընդունելության Հանձնաժողովի նախագահ՝

Ընդունելության Հանձնաժողովի քարտուղար՝

ՀՀ Ազգային գրադարան
NL0235713

54.728